ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա, Հեռ 011 90-00-42

18-2112-15
31.07.2015թ

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի ղեկավար՝ Ա.Սաքունցին

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Հայտնում եմ, որ Գոհար Մոսյանի և Հովհաննես Մոսյանի հաղորդումների կապակցությամբ նախապատրաստված նյութերով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Առդիր՝ որոշումը «9» թերթից:

Հարգանքով՝

ՀՀ հատուկ քննչական ծառայության ընդհանուր
բնույթի հանցագործությունների քննության
վարչության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ,
արդարադատության փոխգնդապետ՝ *Ս.Գ.Առաքելյան*

18-211Ն-15

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին

31.07. 2015թ. քաղ. Երևան

ՀՀ հատուկ քննչական ծառայության ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության փոխգնդապետ Ս.Գ.Առաքելյանս, վերանայելով Հովհաննես Մոսյանի և Գոհար Մոսյանի հաղորդումների կապակցությամբ նախապատրաստված նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2015թ. հուլիսի 13-ին Գոհար Սամվելի Մոսյանը դիմում է ներկայացրել Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ այն մասին, որ որդու՝ Հովհաննես Արթուրի Մոսյանի կողմից զինծառայությունից խուսափելու դեպքով ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ, և նախաքննության ընթացքում խախտվել են որդու մի շարք իրավունքները:

2015թ. հուլիսի 16-ին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից Գոհար Մոսյանի դիմումը գրությամբ ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն, որտեղ այն ստացվել է 20.07.2015թ-ին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Գոհար Մոսյանը, նախազգուշացված լինելով ակնհայտ սուտ մատնություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, իր դիմումին նույնաբովանդակ հաղորդում, այնուհետև՝ բացատրություն է տվել ՀՀ հատուկ քննչական ծառայությունում այն մասին, որ որդին՝ Հովհաննես Մոսյանը, հաշվառված լինելով <<Նոր-Նորք-Ավան>> վարչական շրջանների զինկոմիսարիատում, ունենալով առողջական խնդիրներ, առանց պատշաճ կարգով լիովին բժշկական փորձաքննության ենթարկվելու և բժշկական հետազոտություն անցնելու, կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից ճանաչվել է պիտանի զինծառայության համար: Բացի այդ, նախաքննության ընթացքում քննիչ Ս.Վարանցովյանի կողմից խախտվել են որդու մի շարք իրավունքները, մասնավորապես՝ անհիմն հետախուզում է հայտարարել, քանի որ որդին միշտ եղել է տանը, քննիչը իմացել է նրա հեռախոսահամարը, որը միշտ եղել է հասանելի: Բացի այդ, դատարանը անհիմն որոշում է կայացրել որդու նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը ընտրելու մասին: Կալանավորվելուց հետո որդին ազատ է արձակվել միայն 72 ժամ անց, որի պատճառը, ըստ Գ.Մոսյանի, հանդիսացել է քննիչի կողմից դատախազությանը պատշաճ կարգով Հ.Մոսյանի բացատրությունը չներկայացնելը, որտեղ նա հայտնել է իր առողջական խնդիրների մասին:

Նշել է նաև, որ քննիչ Ս.Վարանցովյանը և ոմն Պողոսյան ազգանունով նրա պետը, բղավելով և վախեցնելով որդուն, ստիպել է գրավոր հրաժարվել պաշտպան ունենալուց, սպառնալով, որ պաշտպան ունենալու դեպքում կկալանավորվի, և որդին վախենալով հրաժարվել է պաշտպանից: Բացի այդ, քննիչ Ս.Վարանցովյանը բղավելով, սպառնալով և ճնշում գործադրելով ստիպել է որդուն իր թելադրանքով ցուցմունք գրել՝ վերջում ավելացնելով, որ այն գրված է որդու բառերով և ճիշտ է, որոնց ժամանակ ինքը եղել է քննիչի բաց պատուհանի մոտ և լսել է բոլոր

խոսակցությունները: Այդ ժամանակ ներկա է եղել նաև այն ոստիկանը, ով որդուն ներկայացրել է քննիչին:

Գոհար Մոսյանը չի բացառել ոստիկանության և զինկոմիսարիատի աշխատակիցների կողմից իրենց տուն այցելած լինելու հանգամանքները, սակայն քանի որ իրենց տան դուռը միշտ փակ է լինում, դռան թակոցներին չեն պատասխանում և դիտանցքից չեն նայում, ուստի չեն կարող ասել, թե նրանք որդուն փնտրել են, թե ոչ:

Հարցին, թե ինչպես պետք է որդուն ներկայացնեին քննությանը, որն է եղել անհիմն հետախուզում հայտարելու հիմքը այն դեպքում, երբ դռան թակոցներին չեն պատասխանել և տան դուռը չեն բացել, Գոհար Մոսյանը պատասխանել է, որ իրավապահ մարմինների բոլոր աշխատակիցները իմացել են իրենց հեռախոսահամարները և նրանք կարող էին զանգահարել ու նոր գալ իրենց տուն, միաժամանակ չհերքելով նաև այն հանգամանքը, որ եղել է դեպք, երբ քննիչ Վարանցովյանը զանգահարել և որդուն բղավելով կանչել իր մոտ, սակայն ինքը այդ մասին տեղյակ չի պահել որդուն:

Նույնաբովանդակ հաղորդում, ապա բացատրություն է տվել Հովհաննես Մոսյանը, հավելելով, որ բնավորությամբ շփվող չէ, գրեթե տանից դուրս չի գալիս և հնարավոր է, որ նույնիսկ անմիջական հարևանը ամիսներով իրեն տեսած չլինի, իսկ քննիչ Վարանոցովյանի մասով հայտնել է, որ նա կարող էր այնքան զանգահարել, մինչև ինքը կպատասխաներ կամ կարող էր իր մայրիկին ասել, որ հեռախոսը փոխանցի իրեն և ինքն այդ դեպքում ժամանակին կներկայանար քննության: Հ.Մոսյանը նշել է նաև, որ իրեն քննիչի աշխատասենյակ տեղափոխած ոստիկանը Վարանցովյանից խնդրել է իր խափանման միջոց ընտրի ստորագրություն չհեռանալու մասին:

Թե՛ Գոհար Մոսյանը և թե՛ Հովհաննես Մոսյանը հաղորդումներ տալու ժամանակ նշել են, որ իրենք որևէ մեկին հանցագործության կատարման մեջ չեն մեղադրում, ընդամենը նշել են իրենց հետ տեղի ունեցած փաստերն ու իրադարձությունները:

Հովհաննես Մոսյանն ինչպես հաղորդման, այնպես էլ՝ բացատրության վերջում հրաժարվել է գրել, որ <<Հաղորդումը կամ բացատրությունը գրված է իր բառերով և ձեռքով, որի համար ստորագրում է>>, բերելով տարբեր պատճառաբանություններ:

ՀՀ ՔԿ 4-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Սերգեյ Վարանցովյանն իր բացատրությամբ հերքել է Հովհաննես և Գոհար Մոսյանների հաղորդումներում և բացատրություններում նշված հանգամանքները, հավելելով, որ իր կարծիքով Հովհաննես Մոսյանի պահվածքը նպատակ է հետապնդում խուսափել պարտադիր զինվորական ծառայությունից: Նշել է նաև, որ Հովհաննես Մոսյանի հետ քննչական գործողությունների ժամանակ բացի իրենից՝ իր աշխատասենյակում այլ քաղաքացի կամ աշխատակից ներկա չեն գտնվել, որևէ սպառնալիքներ չի տվել, առավել ևս չի ստիպել Հովհաննես Մոսյանին հրաժարվել պաշտպան ունենալուց, այլ ընդհակառակը, նրան բացատրել է, որ ֆինանսական խնդիրների պատճառով կարող է ունենալ հանրային պաշտպան, սակայն Հ.Մոսյանը դրանից նույնպես հրաժարվել է: Ըստ Ս.Վարանցովյանի՝ այդ ժամանակ քննչական բաժնի պետը հանդիսացել է Վահագն Աղասյանը, ով տեղափոխվել է այլ աշխատանքի և իր ունեցած տեղեկությունների համաձայն՝ նա գտնվում է արձակուրդի մեջ և այն անց է կացնում ՀՀ-ից դուրս:

Ոստիկանության Նոր-Նորքի բաժնի համայնքային ոստիկաններ Էմմա Արմենի Այվազյանը և Հովհաննես Կարապետի Հովհաննիսյանը նույնաբովանդակ բացատրություններ են տվել այն մասին, որ զինկոմիասարիատից և ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 4-րդ կայազորային քննչական բաժնից ստացված գրությունների և բերման ենթարկելու

մասին որոշումների հիման վրա տարբեր օրերի և ժամերի այցելել են Հովհաննես Մոսյանի բնակարան, սակայն բնակարանի դուռը փակ է եղել, դռան թակոցներին ոչ ոք չի արձագանքել, և վերջինիս հարևանների բանավոր հայտարությունների համաձայն՝ Հովհաննես Մոսյանի գտնվելու վայրի մասին տեղեկություններ չեն ունեցել:

ՀՀ ոստիկանության Նոր-Նորքի բաժնի հետախուզության բաժանմունքի պետ Հարություն Հովսեփի Մկրտչյանը բացատրություն է տվել այն մասին, որ 11.04.2015թ.-ին ՀՀ ՔԿ 4-րդ կայազորային քննչական բաժնի քննիչի կողմից որոշում է կայացվել Հովհաննես Մոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, որի կատարումը հանձնարարվել է ոստիկանության Նոր-Նորքի բաժնին: Ձեռնարկված օպերատիվ հետախուզական միջոցառումների ընթացքում հնարավոր չի եղել քրեական գործի ընթացքի ժամանակ հայտնաբերել և քննությանը ներկայացնել Հովհաննես Մոսյանին, քանի որ վերջինիս բնակության վայրի դուռը տարբեր օրերի և ժամերի կատարված այցելությունների ժամանակ միշտ փակ է եղել և օպերատիվ բնույթի հարցազրույցների ժամանակ վերջինիս հարևանները որևէ տեղեկություն չեն ունեցել նրա մասին: 21.04.2015թ.-ին որոշում է կայացվել ՀՀ թիվ 17139714 քրեական գործով վարույթը կասեցնելու մասին, մինչև Հովհաննես Մոսյանի հայտնաբերելը: 09.06.2015թ.-ին ձեռնարկված բացատրական աշխատանքների արդյունքում Հովհաննես Արթուրի Մոսյանն ինքնակամ ներկայացել է ՀՀ ոստիկանության Նոր-Նորքի բաժին և անմիջապես իր կողմից վերջինս ներկայացվել է քննիչ Սերգեյ Վարանցովյանին, ում մինչ այդ չի ճանաչել: Քննիչի ներկայացնելուց հետո հեռացել է: Հ.Մկրտչյանը նշել է նաև, որ քննիչին խափանման միջոցի վերաբերյալ որևէ բան չի խնդրել և իր համար միևնույն է եղել, թե վերջինիս նկատմամբ ինչ խափանման միջոց կընտրվի:

ՀՀ ՔԿ 4-րդ կայազորային քննչական բաժնի քննիչներ Արմեն Շուքուրյանը և Նարեկ Սարգսյանը նույնաբովանդակ բացատրություններ են տվել այն մասին, որ իրենց աշխատասենյակները գտնվում են 4-րդ կայազորային քննչական բաժնի շենքի առաջին հարկում, որտեղ գտնվում է նաև քննիչ Սերգեյ Վարանցովյանի աշխատասենյակը: Որևէ անգամ Սերգեյ Վարանցովյանի աշխատասենյակից բարձր գոռոցնել, բղավոցներ, վիճաբանության ձայներ չեն լսվել, իսկ այդպիսիք լինելու դեպքում հաստատ կլսեին, քանի որ աշխատասենյակների դասավորվածությունը այնպիսին է, որ դրանք լսելի կլինեին:

ՀՀ ՔԿ 4-րդ կայազորային քննչական բաժնից ստացված գրության համաձայն մոտ 50 տարեկան Պողոսյան ազգանունով աշխատակից չեն ունեցել, իսկ նախկին ՔԿ 4-րդ կայազորային քննչական բաժնի պետ Վահագն Աղասյանից բացատրություն չի վերցվել, քանի որ դեռևս 20.07.2015թ-ին վերջինս հատել է ՀՀ պետական սահմանը ու մինչ օրս չի վերադարձել:

Գոհար և Հովհաննես Մոսյանների կողմից նշված ենթադրյալ հանցագործությունների հանգամանքները պարզելու համար ՀՀ քննչական կոմիտեի ՋՔԳՎ չորրորդ կայազորյանին քննչական բաժնից ստացվել են թիվ 17139714 քրեական գործի նյութերի ողջ լուսապատճենները, որոնց ուսումնասիրությամբ պարզվել է հետևյալ.

<<Երևան քաղաքի Նոր-Նորքի 1-ին զանգվածի Նանսենի 9-րդ շենքի թիվ 96 բնակարանի բնակիչ, 29.02.1996թ.-ին ծնված Հովհաննես Արթուրի Մոսյանը, 23.07.2014թ.-ին անցել է բժշկական հանձնաժողովի կողմից համապատասխան հետազոտություններ և վերցվել զինվորական հաշվառման՝ պիտանի զինվորական ծառայության համար սահմանափակումով և ենթակա է եղել զորակոչման 2014թ.-ի ամառային զորակոչին, սակայն, խախտելով <<Հինապարտության մասին>> ՀՀ

օրենքի պահանջները, փարածքային զինկոմիսարիատ չի ներկայացել և չարամտորեն խուսափել ժամկետային զինվորական ծառայության 2014թ.-ի ամառային հերթական զորակոչից: Դեպքի առթիվ 21.08.2014թ.-ի Նոր-Նորքի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17139714 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում Հովհաննես Մոսյանը հայտնել է, որ ինքը չի խուսափում զինվորական ծառայության մեկնելուց և քանի որ ունի առողջական խնդիրներ, իր կարծիքով պիտանի չէ զինվորական ծառայության համար և եթե համապատասխան բուժումներ ստանալուց հետո, ճանաչվի պիտանի զինվորական ծառայության համար, պատրաստակամություն է հայտնել զորակոչվել ազգային բանակ: Հովհաննես Մոսյանի մոտ առկա հիվանդությունները ախտորոշելու և նրա զինվորական ծառայության պիտանելիության հարցը որոշելու համար նշանակվել է դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ի փորձագետներին:

17.12.2014թ.-ին թիվ 17139714 քրեական գործը քննչական ենթակայության կարգով ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժին:

21.01.2015թ.-ին Հ.Մոսյանը ներկայացվել է ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ի փորձագետներին՝ նշանակված փորձաքննությունը իրականացնելու նպատակով : Փորձաքննության շրջանակներում Հ.Մոսյանին տրվել է ուղեգիր՝ <<Էրեբունի>> ԲԿ-ում հետազոտվելու համար, սակայն վերջինս, առանց բժշկական կենտրոնում հետազոտություններ անցնելու, հեռացել է:

<<Էրեբունի>> բժշկական կենտրոնի վնասվածքաբանության և ոսկրահարդարման բաժանմունքի բուժքույր Լուսինե Գևորգյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Հովհաննես Մոսյանին տեղեկացրել է, որ իրեն հետազոտող բժիշկ Ահարոն Մարգարյանը գտնվում է վիրահատարանում ու խնդրել է փոքր ինչ սպասել, սակայն վերջինս և նրա մայրը հայտնել են, որ պետք է անհապաղ հետազոտվեն, վիճաբանել և հեռացել են:

Նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև նույն բաժանմունքի բժիշկ-օրթոպեդ Ահարոն Մարգարյան:

23.01.2015թ.-ին Հովհաննես Մոսյանին հարցաքննելու նպատակով պատշաճ ծանուցում է ուղարկվել վերջինիս բնակության վայր, սակայն վերջինս չի ներկայացել հարցաքննության: 27.01.2015թ.-ին որոշում է կայացվել Հովհաննես Արթուրի Մոսյանին բերման ենթարկելու մասին:

29.01.2015թ.-ին ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ից ստացվել է թիվ 14-3398 եզրակացությունը, համաձայն որի՝ Հ.Մոսյանի մոտ առկա հիվանդությունները ամբողջությամբ հնարավոր չի եղել ախտորոշել, քանի որ վերջինս ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից ուղեգրվել է <<Էրեբունի>> ԲԿ համապատասխան բուժհետազոտություններ անցնելու նպատակով, սակայն Հ.Մոսյանը չի ենթարկվել նշված ԲԿ-ի կանոններին և ինքնակամ լքել է <<Էրեբունի>> ԲԿ-ի տարածքը՝ չանցնելով համապատասխան բուժհետազոտություններ: Միաժամանակ վերը նշված եզրակացությամբ փորձագետների կողմից նշվել է, որ 23.07.2014թ.-ին ԿԲՀ-ի եզրակացությամբ Հ.Մոսյանի վերաբերյալ տրված ախտորոշումը ճիշտ է, համապատասխանում է նրա առողջական վիճակի հետազոտությունների ակտերում նշված տվյալներին՝ կատարված կլինիկական և լաբորատոր-գործիքային հետազոտությունների արդյունքներին:

Նույն օրը նշված եզրակացության պատճեն, Հովհաննես Մոսյանի անձնական գործի բնօրինակը և ամբուլատոր քարտը ուղարկվել է ՀՀ ՊՆ Նոր Նորքի զինկոմիսարիատ, վերջինիս զինվորական ծառայության պիտանելիության հարցը լուծելու և նրան ազգային բանակ զորակոչելու նպատակով:

04.02.2015թ.-ին ՀՀ ՊՆ Նոր-Նորքի զինկոմիսարիատից ՀՀ ՔԿ ՔՔԳՎ 4-րդ կայազորային քննչական բաժին է ստացվել գրություն այն մասին, որ այցելություն է կատարվել Հովհաննես Արթուրի Մոսյանի բնակության հասցե՝ ՀՀ ՔՈ զորակոչելու համար համապատասխան ծանուցում տալու նպատակով, սակայն տանը դուռը գտնվել է փակ վիճակում:

06.02.2015թ.-ին ոստիկանության Նոր-Նորքի բաժնից ստացված գրության համաձայն՝ Հ.Ա.Մոսյանը շուրջ 6 ամիս է բացակայում է բնակության վայրից և նրա գտնվելու վայրը հայտնի չէ:

17.02.2015թ.-ին կրկին որոշում է կայացվել Հովհաննես Արթուրի Մոսյանին բերման ենթարկելու մասին, որի կատարումը հանձնարարվել է ոստիկանության Նոր-Նորքի բաժնին:

Հովհաննես Մոսյանին և նրա ընտանիքի որևէ չափահաս անդամի հայտնաբերելու և քննությանը ներկայացնելու, ինչպես նաև՝ վերջինիս կողմից զինծառայությունից խուսափելու հանգամանքները պարզելու նպատակով հանձնարարություն է տրվել ոստիկանության Նոր- Նորքի բաժնին:

27.02.2015թ.-ին ոստիկանության Նոր-Նորքի բաժնից ստացված գրության համաձայն՝ Հ.Ա.Մոսյանը բացակայում է իր բնակության վայրից:

Հարցաքննվել են վկաներ՝ զինկոմիասարիատի աշխատակիցներ Ա.Գեղամյանը, Ա.Դավթյանը, որոնք հայտնել են, որ Հովհաննես Արթուրի Մոսյանը ԿԲՀ որոշմամբ ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար, սակայն հրաժարվել է ստանալ համապատասխան ծանուցագիր՝ ՀՀ ՔՈ զորակոչվելու համար:

11.04.2015թ.-ին որոշում է կայացվել Հովհաննես Մոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

11.04.2015թ.-ին միջնորդություններ են հարուցվել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ մեղադրյալ Հովհաննես Մոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և վերջինիս նամակագրությունը վերահսկելու մասին:

Նույն օրը դատարանի կողմից որոշումներ են կայացվել մեղադրյալ Հովհաննես Մոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և վերջինիս նամակագրությունը վերահսկելու մասին:

21.04.2015թ.-ին որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով թիվ 17139714 քրեական գործով վարույթը կասեցնելու մասին:

09.06.2015թ.-ին մեղադրյալ Հովհաննես Արթուրի Մոսյանը ինքնակամ ներկայացել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր-Նորքի բաժին, որտեղից ոստիկանության Նոր Նորքի բաժնի աշխատակիցների կողմից վերջինս ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեի ՔՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժին:

Նույն օրը քրեական գործով վարույթը վերսկսվել է:

09.06.2015թ.-ին Հովհաննես Արթուրի Մոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով, քննիչ Սերգեյ Վարանցովյանը կազմել է մեղադրյալի իրավունքներն ու պարտականությունները բացատրելու վերաբերյալ արձանագրություն, որում Հովհաննես Մոսյանն իր ձեռքով գրել է՝ <<**այժմ**

հրաժարվում եմ պաշտպան ունենալուց, որը կապված չէ իմ նյութական վիճակի հետ և ցանկանում եմ ինքնուրույն պաշտպանել իմ իրավունքները>> *նախադասությունը, այնուհետև՝ կազմվել է Հովհաննես Մոսյանի հարցաքննության վերաբերյալ արձանագրություն, համաձայն որի՝ առաջադրված մեղադրանքում մեղադրյալ Հովհաննես Արթուրի Մոսյանն իրեն մեղավոր չի ճանաչել և իր ձեռքով ցուցմունք է տվել այն մասին, որ համապատասխան բուժհետազոտություններ անցնելու և համապատասխան առողջական վիճակում գտնվելու դեպքում, պատրաստ է մեկնել զինծառայության:*

11.06.2015թ.-ին Երևանի կայազորի զինվորական դատախազության կողմից որոշում է կայացվել Հովհաննես Արթուրի Մոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, փոփոխելու և նոր խափանման միջոց՝ ստորագրություն չհեռանալու մասին ընտրելու մասին:

12.06.2015թ.-ին Հովհաննես Արթուրի Մոսյանը ստացել է ՀՀ ՊՆ Նոր Նորքի զինկոմիսարիատ ներկայանալու անհրաժեշտության մասին գրություն և գրավոր հայտարարել, որ ներկայանալու է՝ իր պիտանելիության հարցը որոշելու և ՀՀ ԶՈ զորակոչվելու համար: Հովհաննես Մոսյանը ՀՀ ՊՆ Նոր Նորքի զինկոմիսարիատ է ներկայացել 30.06.2015թ.-ին:

07.07.2015թ.-ին ՀՀ ՊՆ Նոր Նորքի զինկոմիսարիատից ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 4-րդ կայազորային քննչական բաժին է ստացվել ԿԲՀ-ի 03.07.2015թ.-ի որոշումների պատճենները և գրություն այն մասին, որ Հովհաննես Արթուրի Մոսյանը 03.07.2015թ.-ին կրկին ներկայացվել է ԿԲՀ, որի որոշմամբ վերջինս ՀՀ ՊՆ 410-13 հրամանի 7 Գ և 36Գ հոդվածների համաձայն ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար սահմանափակումով, սակայն չի ներկայանում զինկոմիսարիատ՝ զորակոչման ծանուցագիր ստանալու համար>>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված անմեղության կանխավարկածի սկզբունքի համաձայն՝ հանցանք կատարելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատելիս ապացույցների բավարարությունը որոշելու հարցին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ գործով իր 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշմամբ: Մասնավորապես՝ իրացնելով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական գործառույթը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հիշատակված դատական ակտում նախադեպային նշանակության իրավական դիրքորոշումներ է արտահայտել առ այն, որ. ,(...) Գործի լուծման համար բավարար ապացույցներ ասելով՝ պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն անձի մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման

առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում:

(...) Ապացույցների բավարարությունը չի կարող որոշվել թվաբանական ցուցանիշով: Ակնհայտ է, որ ապացույցները բավարար չեն, եթե՝

1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,

2) եղած ապացույցը թույլ չի տալիս պարզել այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,

3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում (...):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի, <<հիմնավոր կասկածից վեր>> ապացուցողական չափանիշը: Ընդ որում, <<հիմնավոր կասկածից վեր>> ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր):

Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած (...):

Վերը նշված քրեադատավարական նորմերի, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո գնահատելով նախապատրաստված նյութերով ձեռք բերված ապացույցները՝ վարույթն իրականացնող մարմինը գտնում է, որ Սերգեյ Վանացովյանի՝ Հովհաննես Մոսյանի կողմից զինվորական ծառայությունից խուսափելու դեպքով քննված քրեական գործով պահպանվել է քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգը, նրա նկատմամբ հայտարարված հետախուզումը, առաջադրված մեղադրանքը, ընտրված խափանման միջոցը, փորձաքննության նշանակումն ու կատարումը եղել է հիմնավոր, իսկ ինչ վերաբերվում է Հովհաննես Մոսյանի նկատմամբ պաշտպան ունենալուց հրաժարվելու սպառնալիքների, ցուցմունքը քննիչի բառերով թելադրելու և ՀՀ քրեական օրենսգրքով արգելված այլ հանգամանքներին, ապա սույն նյութերի նախապատրաստման ընթացքում բավարար փաստական տվյալներ ձեռք չեն բերվել դրա վերաբերյալ և սպառվել են նոր փաստական տվյալներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները: Այսինքն՝ հիշյալ կասկածը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չի փարատվել, որպիսի պայմաններում այն պետք է մեկնաբանվի հօգուտ քննիչ Ս.Վարանցովյանի և քննչական բաժնի պետ Վ.Աղասյանի: Նման պայմաններում նրանց գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի հանցակազմը:

Նյութերով ձեռք բերված փաստական տվյալները բավարար չեն նաև Հովհաննես Մոսյանին և Գոհար Մոսյանին արարքներում առերևույթ սուտ մատնության հանցակազմը հաստատված համարելու համար:

Մասնավորապես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածը սահմանում է. <<1.Հանցագործությունների մասին ֆիզիկական անձանց հաղորդումները կարող են լինել գրավոր կամ բանավոր:

2.Քննչական գործողություն կատարելիս կամ դատական քննության ընթացքում հանցագործության մասին արված բանավոր հաղորդումը մտցվում է

համապատասխանաբար՝ քննչական գործողության կամ դատական նիստի արձանագրության մեջ: Այլ դեպքերում կազմվում է առանձին արձանագրություն: Արձանագրության մեջ պետք է նշվեն դիմողի ազգանունը, անունը, ծննդյան թիվը, բնակարանի և ծառայողական հասցեն, նրա առնչությունը հանցագործությանը և իրազեկության աղբյուրը, ինչպես նաև տեղեկություններ նրա կողմից ներկայացված անձը հաստատող փաստաթղթերի մասին: Եթե դիմողը չի ներկայացրել անձը հաստատող փաստաթղթեր, պետք է ձեռնարկվեն այլ միջոցառումներ՝ նրա անձի մասին տեղեկություններն ստուգելու համար:

3. Եթե լրացել է դիմողի 16 տարին, նա նախազգուշացվում է սուտ մատնության համար պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ: (...)>>:

ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածը սահմանում է.

<<1.Հանցագործության մասին սուտ մատնությունը, եթե անձը գործել է՝ գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է՝ (...)

2.Նույն արարքը, որը՝ զուգորդվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելով, (...)>>:

Սուտ մատնությունը կարող է կատարվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ձևով: Գրավոր ձևի դեպքում հաղորդման ստորագրված կամ անստորագիր(անանուն) լինելու հանգամանքը նշանակություն չունի:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը գիտակցում է, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է, չի համապատասխանում իրականությանը, այլ կերպ՝ հիշյալ արարքը պետք է կատարվի մեղավորությամբ: Հաղորդվող տեղեկությունների կեղծ լինելու մասին բարեխիղճ մոլորությունը բացառում է տվյալ արարքի համար քրեական պատասխանատվությունը: Հանցագործության շարժառիթները կարող են ամենաբազմազանը լինել՝ վրեժ, խանդ և այլն:

Այս առումով հարկ է նշել, որ Հովհաննես Մոսյանի և Գոհար Մոսյանի արված հայտարարությունները՝ կապված հետախուզում հայտարարելու և կալանավորվելու հետ, հանդիսանում են Հ.Մոսյանի կողմից զինվորական ծառայությունից խուսափելու դեպքով քննվող քրեական գործի նախաքննություն իրականացնող քննիչի գործելակերպի վերաբերյալ նրանց գնահատողական դատողություններ, այսինքն՝ դրանք պետք է գնահատվեն այս համատեքստում, որպիսի պարագայում պարզ է դառնում, որ սուտ մատնություն կատարելու արարքում նրա մեղավորությունը բացակայում է:

Իսկ ինչ վերաբերվում է Հովհաննես Մոսյանի և Գոհար Մոսյանի արված հայրարարությունների՝ Հովհաննես Մոսյանի նկատմամբ պաշտպան ունենալուց հրաժարվելու սպառնալիքներ, ցուցմունքը քննիչի բառերով թելադրելու և ՀՀ քրեական օրենսգրքով արգելված այլ հանգամանքներ կատարելու մասով, ապա սույն նյութերի նախապատրաստման ընթացքում բավարար փաստական տվյալներ ձեռք չեն բերվել այն մասին, որ դրանք հանդիսանում են ակնհայտ սուտ տեղեկություններ և սպառվել են նոր փաստական տվյալներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները, այսինքն՝ հիշյալ կասկածը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չի փարատվել, որպիսի պայմաններում այն պետք է մեկնաբանվի հօգուտ Հովհաննես Մոսյանի և Գոհար Մոսյանի: Նման պայմաններում Հովհաննես Մոսյանի և Գոհար Մոսյանի գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի հանցակազմը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող

իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե արարքի մեջ հանցակազմ չկա:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 55-րդ հոդվածի 2-րդ մասով, 181-րդ հոդվածի 1-ին պարբերության 2-րդ կետով, 185-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Հովհաննես Մոսյանի և Գոհար Մոսյանի հաղորդումների կապակցությամբ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժել՝ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 4-րդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Սերգեյ Վարանցովյանի և բաժնի նախկին պետ Վահագն Աղասյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի, իսկ Հովհաննես Մոսյանի և Գոհար Մոսյանի գործողություններում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի հանցակազմերի բացակայության հիմքով:

2. Որոշման պատճենն ուղարկել Հովհաննես Մոսյանին, Գոհար Մոսյանին, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Ա.Սաքունցին, Սերգեյ Վարանցովյանի և Վահագն Աղասյանին ու նրանց պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին՝ որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա վերադաս դատախազն այն ստանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը: Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը:

3.Որոշման պատճենն ուղարկել նյութերի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին:

ՀՀ հատուկ քննչական ծառայության
ընդհանուր բնույթի հանցագործությունների
քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ,
արդարադատության փոխգնդապետ՝ Ս.Գ.Առաքելյան